Գործ հմ. ԵԴ/10556/02/23

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

28.03.2023թ. ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա.Պետրոսյանս, ուսումնասիրելով հայցվոր <<ԱԷՄՋԻ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Լևոն Օհանյանի կողմից ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվոր <<ԱԷՄՋԻ>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Լևոն Օհանյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող <<Ճամբարակի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի՝ 28.02.2023թ. <<ԱԷՄՋԻ>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին:

Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը դատավորի աշխատակազմին են հանձնվել 24.03.2023 թվականին:

Հայցվորի ներկայացուցչի կողմից պահպանվել են հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածներով առաջադրվող պահանջները:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 234.5-րդ հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով,

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
3. Թիվ ԵԴ/59558/02/22 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2023թ. մայիսի 10-ին:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ